11548

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«09» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 236 - 25

Նախաձեռնող՝ ***«Էկո կոնցեպտ» ՍՊԸ***
ք. Աբովյան, Է. Պետրոսյան 16/1

Գործունեությունը՝ ***Աբովյան բնակավայրի Է. Պետրոսյան 4/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 236 - 25
« 09 » 10 2025թ.

Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Է. Պետրոսյան 4/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Էկո կոնցեպտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Աբովյան բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Էկո կոնցեպտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Է. Պետրոսյան 4/4 հասցեում նախատեսվում է բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցում (այսուհետ՝ Շենք):

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Աբովյան համայնքի կողմից տրված 2024թ. փետրվարի 22-ի N 111 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի գրանցման վկայականով ամրագրված 7313.3 քմ մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 07-002-0121-0017), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը իրականացվում ՀՀ-ում ներդրումային ծրագրի շրջանակներում, որի արդյունքում նախատեսում է ստեղծել շուրջ 400 աշխատատեղ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում որպես Բ կատեգորայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Աշխարհագրական տեսակետից տարածքը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Է. Պետրոսյան 4/4 հասցեի հողամասում: Տարածքը կառուցապատված չէ: Տարածքում առկա է կիսաքանդ լողավազան, որը կապամոնտաժվի հողային աշխատանքների ընթացքում: Հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, հողամասեր և տարածքներ, մոտակա շինությունը գտնվում է շենքից 28 մ հեռավորության վրա: Հողամասն ունի փոքր ինչ թեքություն՝ արևելքից արևմուտք 1% թեքությամբ (գեոդեզիական նիշերը տատանվում են 1402.25–1404մ):

Հիդրոերկրաբանական ուղեգծով գրունտային ջրի մակարդակը տարբեր տարիներին ուսումնասիրված նյութերի հիման վրա 50 մ խորություններում բացակայում է: Համաձայն

կատարված և ներկայացված ուսումնասիրությունների՝ հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ լիցքերը, խճավազը կավավազային լցիչով, խճային, խճավազային գրունտը (խարամներ) ավազային լցիչով, բազալտի բեկորները, բազալտը արմատական տեղադրմամբ: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում՝ նախագծվող կառույցի վրա, բացակայում են:

Համաձայն ինժեներա երկրաբանական հետազոտությունների եզրակացության՝ ՝ ինժեներաերկրաբանական տեսակետից հետազննվող հողամասը շինարարություն կատարելու համար բարենպաստ է:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես – 7313.3 քմ,
- ✓ կառուցապատման մակերես – 2025.5 քմ,
- ✓ կանաչապատման մակերես – 2970 քմ,
- ✓ ճանապարհ, մայթ և այլ – 2317.8 քմ;
- ✓ ստորգետնյա առաջին հարկի կառուցապատման մակերես – 3577.3 քմ;
- ✓ ստորգետնյա երկրորդ հարկի կառուցապատման մակերես – 3577.3 քմ,
- ✓ բնակարանների ընդհանուր թիվը - 360 բնակարան,
- ✓ ստորգետնյա ավտոկայանատեղ – 162:

Համաձայն նախագծային փաստաթղթի՝ նախատեսվում է կառուցել 82.1×33.3 մ չափերի չորս մուտքանի բազմաբնակարան բնակելի շենք: Յուրաքանչյուր մուտքում նախատեսված է մեկ աստիճանավանդակ (աստիճանավանդակի դռները հակահրդեհային են և ինքնափակվող) և երկու վերելակ: Վերգետնյա հատվածի (+0.00 նիշ) կառուցապատման մակերեսը կազմում է 2025.5 քմ, որը հողատարածքի 27.7%-ն է: Տարածքի մնացած հատվածում նախատեսվում է ճանապարհ և ընդարձակ բակային տարածք կանաչապատ գոտիով և բարեկարգմամբ: Շենքը նախագծված է 2 նկուղային հարկերով: -1 հարկում կազմակերպված է ավտոկայանատեղի՝ 70 մեքենայի համար, մակերեսը՝ 3577.3 քմ: Ընդհանուր նախատեսվում է 162 ավտոկայանատեղի: Առաջին հարկում (0.00 նշ) նախատեսվում է հասարակական տարածք, որի մակերեսը կազմում է 2025.5 մ^2: -2 հարկում կազմակերպված է ավտոկայանատեղի՝ 92 մեքենայի համար: Հարկն ունի երկակի նշանակություն՝ որպես ավտոկանգառ և անհրաժեշտության դեպքում որպես պարզագույն թաքստոց շուրջ 1500–1800 մարդու համար: Արտաքին չափերով մակերեսը կազմում է 3577.3 քմ: Բնակելի տիպային հարկերում (2-րդից մինչև 16-րդ) բնակարանների թիվը 24 է, իսկ ամբողջ շենքում՝ 360: յուրաքանչյուր տիպային հարկի արտաքին մակերեսը 2300.2 քմ է, իսկ օգտակար մակերեսը՝ 1605.4 քմ:

Տանիքը հարթ է, անձրևաջրերի և հալոցքների հեռացումը նախատեսված է իրականացնել շենքի ներսում տեղադրված ջրահորդանների միջոցով:

Շահագործման ընթացքում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում:

Պատճառաբանական մաս.

Գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Աբովյան համայնքի ղեկավարի նստավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային լսում: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրային լսման մասնակիցների կողմից

արժանացել է հավանության: Լսման ընթացքում բարձրացվել է հարց՝ շենքերի հարկայնության և վերջինիս հիմնադրությանին փաստաթղթին համապատասխանության վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է գործող օրենսդրության փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Աբովյանի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում և եզրակացությունը կազմելիս: Քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացվել է կարծիք համաձայն որի՝ Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 4-ի N349-Լ որոշմամբ և Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N111-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Կոտայքի մարզպետի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի՝ քննարկվող հողամասը գտնվում է ԲՆԿԳ-3 կառուցապատման գոտում, համաձայն որի՝ նախատեսված է 4-5 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն), 6-9 վերգետնյա հարկ (նկուղային հարկի հնարավորություն), և անհրաժեշտ է համարվել նախատեսվող շինության հարկայնության վերանայումը:

Հարկ է նշել, որ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Է. Պետրոսյան 4/4 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցումը չի բխում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի պահանջի՝ «հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները» կատարումից:

Ելնելով վերը նշված հիմնավորումներից՝ վերանայված նախագիծը ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացություն ստանալու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանական մասը՝ «Էկո կոնցեպտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի Է. Պետրոսյան 4/4 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան